

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՄԱՐԻԱՆՆԱ ԱՊՐԵՍՅԱՆ

Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԱՆԵՑՈՂ ՊԱՏՐԻԱՐԷԻ ՎԱՐՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կոստանդնուպոլսի պապրիարք Ս. Հովհաննես Պանեցողի քոնը Հայոց Հայսմավորքներում նշվում է սեպտեմբերի 2-ին:

Նախքան հայկական եւ հունական հայսմավորքային բնագրերի ուսումնասիրությանն անցնելը, նյութի հստակ պարկերացման համար ներկայացնենք Ս. Հովհաննես Պանեցողի վարքը, որը հայկական հայսմավորքային բնագրերում բավական համառոր է շարադրված:

Ս. Հովհաննեսի վերաբերյալ փեղեկությունները վերաբերում են Բյուզանդիայի Հուսրինիանոս, Տիրերիոս Փոքր եւ Մավրիկիոս կայսրերի գահակալության փառիններին: Նա շնորհիվ իր վարած ճգնակեցական կյանքի եւ խիստ ծոմապահության կոչվել է «Պանեցող» եւ ձեռնադրվել Կ. Պոլսի պապրիարք (582-595): Հայոց Հայսմավորքներում խմբագիրները խոսում են նրա կատարած հրաշքների եւ նշանների մասին, սակայն նշում են միայն երկուսը:

Այս վարքի հայերեն բնագիրը հունարեն բնագրի հետ համեմատելու համար ունենք Հայոց Հայսմավորքի երեք խմբագրություն՝ Հովսեփ Կ. Պոլսեցու¹ (Ժ. դար), Գրիգոր Անավարզեցու² (ԺԲ.) եւ Գրիգոր Ծերենցի³ (ԺԵ.): Հունարեն բնագրի համար որպես հիմք ունենք երեք հայսմավորքներ՝ Վասիլիոս Բ. կայսեր⁴ (Ժ. դար), Կ. Պոլսի (Acta Sancturum Eccl. Constantinopolitanae)⁵ (Ժ.) եւ Մաքսիմոս Մարգունիոսի⁶ (ԺԶ.):

1 Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարան, 1048, 11բ:

2 Վենետիկ 710, 6բ-7ա:

3 Գր. Ծերենց, Գիրք որ կոչի Այսմատուրք, Կ. Պոլիս, 1730, էջ ԽԹ.:

4 J. - P. Migne, *Ελληνική Πατρολογία*, Menologium Graecorum Basilii Porphyrogeniti Imperatoris Jussu Editum, *Μήνι Σεπτέμβριος*, τομ. 117, Αθήναι, 2005, p. 25.

5 H. Delehaye, *Synaxarium Eccl. Constantinopolitanae*, Bruxellis, 1902, p. 7-8.

6 *Μάξιμος Μαρτυρικός*, *Επίσκ. Κυθήρων, Βίοι αγίων εκ της ελληνικής γλώττης ήτοι εκ των συναγαρίων μεταφρασθέντες*, Βενετία, 1621.

Աչքի անկացնելով հայերեն և հունարեն բնագրերի տարբերակները՝ պարզ է դառնում, որ Գրիգոր Անավարզեցու խմբագրության բնագիրը շատ մոտ է հունարեն կոստանդնուպոլսյան տարբերակին: Ինչ վերաբերում է Նովսեփի Կ. Պոլսեցու և Գրիգոր Ծերենցի խմբագրության բնագրերին, ապա դրանք համառոտ են և իրար շատ նման:

Նովսեփի Կ. Պոլսեցու մոտ Նովհաննես Պահեցողի վարքը բաղկացած է երեք նախադասությունից: Ծերենցյան տարբերակը, որ նույնպես բաղկացած է երեք նախադասությունից, ի տարբերություն Նովսեփի Կ. Պոլսեցու, ունի հավելյալ մեկ վերջաբան: Առաջին նախադասությունը վկայում է, որ Նովհաննեսն իր ծոմապահության շնորհիվ կոչվեց «Պահեցող»: Երկրորդ նախադասությունը մահացածին համբուրելու պատմությունն է, որ Գրիգոր Անավարզեցին չունի: Ի դեպ, այն պակասում է նաև Վասիլիոսի և Կ. Պոլսի հունական հայսմավուրքներում: Երրորդ նախադասությունը վկայում է Նովհաննես Պահեցողին երեշտակներով շրջապարված փեսնելու մասին: Այս պատմությունը թեև կա նաև Գրիգոր Անավարզեցու մոտ, սակայն պակասում է վերոհիշյալ հունական երեք հայսմավուրքներում:

Նովհաննես Պահեցողի վարքի ծերենցյան տարբերակի վերջաբանը, որ վերաբերում է նրա խոր ծերության հասնելուն և մահվանը, կա ինչպես Անավարզեցու մոտ, այնպես և հունարեն բոլոր խմբագրություններում: Սա ցույց է տալիս, որ Ծերենցի աղբյուրը միայն Նովսեփի Կ. Պոլսեցին չի եղել:

Գրիգոր Անավարզեցու խմբագրություն. Այս խմբագրության բնագիրը շատ նման է հունական կոստանդնուպոլսյան տարբերակին: Նովհաննես Պահեցողի վարքը բաղկացած է ութ տարբերությունից, որոնց հերթականությունը հունարեն բնագրի հետ համեմատյալ խախտված է, օրինակ՝ Ս. Նովհաննեսի ժամանակ գահակալած Նուսրիմանոս, Տիբերիոս և Մավրիկիոս կայսրերի մասին հայերեն բնագրում խոսվում է չորրորդ տարբերության մեջ, մինչդեռ հունարենում այն շարադրված է երրորդում: Նայելենում չկա նաև Պահեցողի փորագրիչ-*χαράκτης* լինելու մասին վկայությունը, որն ընդհանուր է բոլոր հունարեն բնագրերում և չկա հայերենների մեջ: Գրիգոր Անավարզեցու մոտ կա հավելյալ վկայություն՝ Նովհաննեսին երեշտակներով շրջապարված փեսնելու մասին պատմությունը, որը բացակայում է հունարեն բնագրերում: Նկարի ունենալով այն հանգամանքը, որ Անավարզեցու Նայսմավուրքում սա պարկանում է այն վարքերի թվին, որոնք ուղղակի թարգմանված են հունարենից Գրիգոր Անավարզեցու Նայսմավուրքում ներառելու համար, կարող ենք եզրակացնել, որ այսօր մեզ ծանոթ հունարեն հայսմավուրքներից բացի, Անավարզեցու ձեռքի տակ եղել է մեկ այլ հունարեն Նայսմավուրք, որից և նա կարարել է իր թարգմանությունը:

Գրիգոր Անավարզեցու թարգմանության մեջ ուշագրավ է նաև այն փաստը, որ նա որոշ հունարեն բառեր ճիշդ չհասկանալով՝ չի թարգմանել և պահել է նույնությամբ՝ դրանք հայապատ դարձնելով, ինչպես օրինակ՝ **կավլիսկի-ցողուն** (έν καυλίσκῳ) և **թրիդակինիսի-հագար** (մարտ) (έν θριδακίνῳ). «...զի Զ. ամիս առանց հացի և ջրոյ եկաց, այլ յամենայն առաւ բաւականանայր միով կավլիսկի և միով թրիդակինիսի», և կամ խոսելով Ս. Նովհաննեսի խիստ ճգնության և քիչ քնելու մասին՝ չի կարողացել հաս-

կանալ մոմի եւ ասեղի մասին պատմությունը՝ գեղջեղ է այն, սակայն շարունակել է խոսել աղոթքով հսկելու մասին:

Նայերեն վարքերի առանձնահատկությունները. Նայերեն հայսմավուրբային երեք խմբագրության վարքերն էլ խոսում են այն մասին, որ հաճախ Ս. Նովհաննեսի սպասավորները կամ աղոթակից եղբայրները նրան քննել են հրեշտակներով շրջապատված: Նայերեն բնագրերի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ վարքի մեջ խոսվում է մի մեռելի համբույրի մասին, որպեղ նախադասության ենթական փոխված է ուղիղ խնդրի հետ: Այսինքն՝ իբրեւ թե Նովհաննեսը համբուրում է մի մեռելի, որը եւ կենդանի մարդու նման համբուրում է պատրիարքին: Այս պատմության մասին վկայում են միայն Մաքսիմոս Մարգունիոսի եւ Նիկողիմոս Այխորիդիսի⁷ հայսմավուրբները, համաձայն որոնց՝ մեռելը նույն ինքը Նովհաննես պատրիարքն է, իսկ համբուրողը՝ եպարքոս Նիլոսը: Ըստ այս պատմության՝ երբ Նովհաննես պատրիարքը հոգին ավանդում է Տիրոջը, նրա մարմինը դնում են կենդանում, որպեսզի քրիստոնյաները համբուրեն եւ հրաժեշտ պան: Այդ ժամանակ Նիլոսը՝ փառավոր մի եպարքոս, գալիս է պատրիարքին համբուրելու, որպեղ եւ քննել է ունենում հրաշքը: Նենց նա համբուրում է սրբի մարմինը, այն իսկույն վեր է կենում եւ կենդանի մարդու պես համբուրում Նիլոսին: Նովհաննեսը նաեւ գաղտնի խոսքեր է շփոթում նրա ականջին, որոնց մասին վերջինս ողջ կյանքի ընթացքում չի հայտնում:

Ուշագրավ է, որ Նայսմավուրքի համառոտ խմբագրության մեջ⁸, որն ընդամենը երեք նախադասություն է պարունակում, այս պատմությանը վերաբերող երկրորդ նախադասությունում եւս ասվում է, թե համբուրողը հայրապետն է: Սակայն այսպեղ պատմությունը հետաքրքիր զարգացում է ստանում, ըստ որի նրա համբույրից մեռյալը կենդանանում է:

Այսպիսով՝ Ս. Նովհաննես Պանեցողի վարքի այս համեստ ուսումնասիրությունը արդյո՞ք ցույց չի տալիս, որ հայերեն բնագրերն այլ աղբյուր են ունեցել, այլապես չէինք համարձակվի ասել, թե հայերեն թարգմանիչը չի հասկացել քրեքսը եւ ենթական շփոթել է ուղիղ խնդրի հետ:

⁷ Stén N. *Αγιορείτου*, Συναξαριστής των δώδεκα μύθων του ενίαυτου, τόμος 1, Σεπτέμβριος - Οκτώβριος, Θεσσαλονίκη, 1993, էջ 62-63:

⁸ ՄՄ 3568: